ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Գրեց՝ ՊՐՕՖ. Ն. ԱԴՈՆՑ

II

Խոսրով, հայրենի գահը նստելով, իր բարերար Մաւրիկի հետ բարեկամութեան դաշն կնքեց 591 թուին եւ ի տրիտուր զիջաւ նրան Հայաստանի մեծագոյն մասը, թողնելով իրեն Դուին, Սիւնիք եւ Վասպուրական:

Հակառակորդ պետութիւնների հաշտութիւնն իսկ աղետաբեր եղաւ մեզ համար ոչ նըուազ քան նրանց թշնամութիւնը: Ինչպէս այժմ, այնպէս էլ հնում ե՛ւ կուում եւ համբուրւում էին զօրեղները մեր դիակների վրայ:

Քրիստոնեայ կայսրը բարեմիտ էր դէպի հայերը, երբ Հայաստանը պարսից ձեռքին էր: Հէնց որ գրաւեց հայ հողերը, փոխեց իր գոյնը:

Մաւրիկ կայսեր վերագրում էին հայերը մի քստմնելի ամբաստանագիր, ուղղուած Խոսրովին. «Ագդ մի խոտոր եւ անհնազանդ, ասէ, կան ի միջի մերում եւ պղտորեն: Բայց, ե՛կ, ասէ, ես զիմս ժողովեմ եւ ի Թրակիա գումարեմ եւ դու զքոյդ ժողովէ եւ հրամայէ յարեւելս տանել, զի եթէ մեռանին, թշնամի մեռանին, եւ եթէ սպանանեն, զթշնամիս սպանանեն եւ մեք կեցցուք խաղաղութեամբ: Զի եթէ զոքա յերկրի իւրեանց լինիցին, մեզ հանդչել ոչ լինի»:

Դժուար թէ կայսեր բարոյական սնանկութիւնը այնքան յառաջացած լինէր, որ այպիսի թուղթ գրէր: Զազրելի ծրագիրները չեն սիրում լոյս, եւ ծնում եւ հասունանում են մթութեան մէջ: Հայ զրոյցը, սակայն, արտացոլում է ստուգիւ իրական դրութիւն:

Պարսիկները գումարել էին հայ այրուձին եւ փակել Սպահանում, իսկ իշխաններին տարել Տիզբոն: Ցոյներն եւս իրենց բաժնի հայ ոյժերը տեղափոխել էին Թրակիա, կռուելու ընդդէմ թշնամիների:

Այսպիսի պայմաններում հայ ղեկավար ոյժերը հարկադրուած էին մաքառել եւ պարսիկների եւ յոյների դէմ: Պարսկական բաժնում՝ նրանք սպանում են պետական համարակարին եւ խլում դանձած տուրքը. «Ի դանձուդ այդորիկ զՀայաստան մեր արասցուք եւ առեալ ի նոցանէ օգնութիւն պատերազմեսցուք ընդ երկոսին թագաւորսդ եւ բռնութեամբ զերկիրդ մեր ի մեզ դարձուսցուք»:

Այսպէս մտածողների թւում էին նաեւ Մամակ Մամիկոնեան եւ Գագիկ Մամիկոնեան:

Ցունական բաժնում եւս ժայթքում է դըժգոհութիւնը: Կայսրը պահանջում է հայ այրուձին երկու նշանաւոր եւ ազդեցիկ ցեղի ներկայացուցիչների՝ Սահակ Մամիկոնեանի եւ Սմբատ Բագրատունու առաջնորդութեամբ, որ ուղարկէ Թրակիայի ճակատը:

Իշխանները խորհում են եւ վճռում ապըստամբել. «Մնդրէին ի բաց կալ ի ծառայութենէն յունաց թագաւորին եւ նստուցանել իւրեանց թագաւոր զի մի եւ նոցա հասցէ մեռանել ի կողմանս Թրակացւոց, այլ կեալ եւ մեռանիլ ի վերայ աշխարհին իւրեանց»:

Հայ նախարարների հայրենասիրական բարձր զգացումը վկայում են եւ օտար աղբիւրները:

Սահակ Մամիկոնեանը հնազանդւում է կայսեր հրամանին. իսկ Սմբատ Բագրատունին ճանապարհից յետ է դալիս եւ ապստամբների գլուխն անցնում: Նա է որ սպանում է Ցովհան պատրիկին, յունական բաժնի կառավարչին 591 թուին:

Մամիկոնեան տրամադրութեանց արտայայտիչն էր Համազասպ Մամիկոնեանը, որ յունաց Հերակլ զօրավարի հետ էր եւ ընդդէմ ապստամբական ցոյցերին: Այս ժամանակներից սկսուած հետզհետէ զօրանում է Մամիկոնեան հոսանքի թեքումն դէպի Արեւմուտք, իսկ Բագրատունեացը դէպի Արեւելք:

Սմբատի յանդուգն սպանութեան գործը քննելու եկաւ մայրաքաղաքից սենատոր Դո-